

Կ-051¹-11.03.2019,15.04.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գործունեության իրականացման ծանուցման մասին» 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասի ծանուցման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի «4. ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

10.	ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրերի) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման	ԿՄ
-----	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն պահանջը չի տարածվում Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 4-րդ բաժնի 10-րդ կետով նախատեսված դեպքի վրա:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից և գործում է մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հոդված 22. Ծանուցման ենթակա գործունեության տեսակների ցանկը

1. Գործունեությունը համարվում է ծանուցման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:

2. Ծանուցման ենթակա գործունեության տեսակների աղյուսակը՝

Հ/հ	Ծանուցման ենթակա գործունեության տեսակը	Ծանուցում ներկայացրած անձանց հաշվառող մարմինը	Ոլորտ	Վայրի պահանջ
1	2	3	4	5
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ			
1.	Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր	ԿՄ	-	-
	2. ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ			
1.	Անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատրաստուկների արտադրություն	ԿՄ	-	Վ
2.	Անասնաբուժասանիտարական փորձաքննություն	ԿՄ	-	Վ
3.	Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրություն և (կամ) վաճառք	ԿՄ	-	Վ
	3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ			
1.	Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, բացառությամբ այն ծառայությունների, որոնց մատուցման համար անհրաժեշտ է տիրապետել և շահագործել էլեկտրոնային հաղորդակցության ցանց	ՀԾԿՀ	Ա	Վ
	3.1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ			
1.	Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեություն	ԿՄ	-	-
	4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՐՆԵՐ			
1.	Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն	ԿՄ	Ա	Վ
2.	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային	ԿՄ	-	Վ

	անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրություն			
	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208	ԿՄ	-	Վ
3.	ծածկագրին դասվող` միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրություն			
3.1	խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրություն	ԿՄ	-	Վ
4.	Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	ԿՄ	Ա	-
5.	Գարեջրի արտադրություն	ԿՄ	Ա	-
6.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում	ԿՄ	-	Վ
7.	Առևտրի իրականացման վայրի կազմակերպում	ԿՄ	-	Վ
8.	«Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում	ԿՄ	Ա	-
9.	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական` մշակված կամ չմշակված, բայց չջրջանակված կամ չամրացված ալմաստների առք և վաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում».	ԿՄ	Ա	
10.	<i>ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրերի) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ցեմենտի «Բացթողնում` ներքին սպառման համար», «Վերամշակում` մաքսային տարածքում» և «Վերամշակում` ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման</i>	ԿՄ		
5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ				
1.	Գենետիկ ինժեներիայի գործունեություն	ԿՄ	-	Վ

Հոդված 24. Անցումային դրույթներ

4. Նոր գործունեությունը ծանուցման ենթակա կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը պաշտոնապես հրապարակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործունեությունը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ենթակա է լիցենզավորման:

Սույն պահանջը չի տարածվում Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 4-րդ բաժնի 10-րդ կետով նախատեսված դեպքի վրա:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ
«ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱխԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹԹԵԱՅԻՆ ԿՈՂ՝ Կ-051¹-11.03.2019-SՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	«Գործունեության իրականացման ծանուցման» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի ծանուցման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ:	Առաջարկվում է՝ «4. ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժինը լրացվող 10-րդ կետում՝ «(բացառությամբ 2523210000 ապրանքային դիրքի ծածկագրի)» բառերը փոխարինել «(բացառությամբ 2523210000, 252310000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրերի)» բառերով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.		Նախագծի 3-րդ հոդված:	Առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից և գործում է մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: